## *ԲԱՑԱՏՐԱԳԻՐ*

*Հիմքեր նախագծի մշակման համար*

*Սույն աշխատանքային նախագիծը կազմված է համաձայն՝*

1. *Վայոց ձորի ԳԳՄ 11.07.2024թ. տեխնիկական պայմանների*
2. *ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնքի 12.08.2024 N35 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք)*

*Նախագիծը մշակված է համաձայն հետևյալ գործող նորմատիվ փաստաթղթերին՝*

1. *ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,*
2. *ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում»*
3. *ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում»*
4. *ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»*
5. *ՀՀՇՆ I -3.01.01-2003 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում»*
6. *ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ»*
7. *ՀՀՇՆ 42-01-2023 «ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»:*

### *Օբյեկտի բնութագիր*

*Նախագծով կազմել է ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:*

*Նախագծվող ց/ճ գազատարի տեղադրումը և Ø76x3.5մմ մ/ճ գազատարի փախարինումը Ø108x4,0մմ գազատարով նախատեսվում է վերգետնյա եղանակով պողպատյա Ø133x4.0մմ, Ø108x4,0մմ, Ø57x3.5մմ ԳՕՍՏ 10704-01 խողովակներից, որոնք նախատեսված է տեղադրել H=1÷4.0մ բարձրությամբ, իսկ ճանապարհային անցումներում H=5.0մ բարձրությամբ հենասյուների վրա:*

*Նախագծվող վերգետնյա գազատարերը և հենասյուները շրջակա միջավայրի ազդեցությունից պաշտպանելու համար նախատեսված է կրկնակի յուղաներկում:*

*Աշխատանքներում նախատեսված են նաև բոլոր մուտքագծերի կտրում և միացում:*

*Գազատարը տեղադրումից հետո ենթակա է փչամաքրման և փորձարկման:*

### *Գազատարների փորձարկումը*

*Շինարարության ավարտից հետո պետք է կատարվեն գազատարների հերմետիկության փորձարկում օդով:*

*Հերմետիկության փորձարկումը կատարվում է գազատարի մեջ սեղմված օդի մատուցմամբ, որի ճնշումը հասցվում է փորձարկման ճնշմանը:*

*Գազատարների փորձարկման նորմաները ընդունել համաձայն ՀՀՇՆ 42-01-2023 ՀՀՇՆ 42-01-2023 «ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» շիննորմերին համապատասխան:*

*Փորձարկման ընթացքում հայտնաբերված արատները պետք է վերացվեն գազատարում ճնշումը մինչև մթնոլորտայինի իջեցնելուց հետո:*

*Արատները վերացնելուց հետո գազատարի հերմետիկության փորձարկումը պետք է կրկնվի:*

*Բոլոր եռակցակարերը, որոնք կատարվել են փորձարկումներից հետո, պետք է ստուգվեն ֆիզիկական մեթոդով:*

***Եզրակացություն***

*Նախագիծը մշակված է համաձայն գործող ՀՀՇՆ 42-01-2023 «ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» շիննորմերին «Գազաբաշխիչ համակարգեր» «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի պահանջների:*

*Աշխատանքները սկսելուց առաջ պետք է նշանակվի տեխնիկական հսկողության ներկայացուցիչ պատվիրատուի կողմից:*

*Նախագծից բոլոր շեղումները պետք է համաձայնեցվեն պատվիրատուի, շահագործող կազմակերպության և նախագծի հեղինակի հետ:*

***Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները***

*Նախագծով ընդունված բոլոր տեխնիկական լուծումները բացառում են շրջակա միջավայրի աղտոտումը գազատարների նորմալ շահագործման պայմաններում համաձայն : Շրջակա միջավայրի աղտոտումը հնարավոր է միայն վթարների ժամանակ: Վթարները բացառելու համար գազատարը ենթարկվում է փորձարկման: Խողովակների միացման մասերում քայքայումը կանխելու համար նախատեսվում է եռակցակարերի ստուգում ֆիզիկական մեթոդներով:*

*Բնության պահպանության նպատակով անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները*

1. *Շինարարության համար հատկացված տարածքի սահմանների պարտադիր պահպանություն*
2. *Շին. Հրապարակի աշխատանքային տեղերի կենցաղային և շինարարական թափոնների համար բեռնարկղերով հագեցվածություն*
3. *Դյուրավառ և քսայուղերի դատարկումը միայն հատուկ առանձնացված տեղերում*
4. *Ամբողջ ծավալով հողերի վերականգնման միջոցառումների իրականացում*
5. *Բնապահպանական տեղական մարմինների պահանջների ապահովում:*

*«Լալիկ Բոզոյան» ԱՁ                    Լ.Բոզոյան*

*Կիրառում*

I. *Նախագծային աշխատանքներ.*
*Նախագիծը կազմվել է համաձայն ՀՀ-ում գործող նորմերին և կանոններին:*

II. *Նախահաշիվ (տես. նախագծի «նախահաշիվ» մասում)*

III. *Կապալի օբյեկտի առանձին մասերի կոնստրուկցիաներին և օգտագործվող նյութերին ներկայացվող պահանջները.*
*Բոլոր օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն արտադրողի կողմից տրամադրված որակի չափանիշներին (սերտեֆիկատի պայմաններին):*

IV. *Կապալի աշխատանքի կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները.*

1. *կապալառուն տվյալ օբյեկտի աշխատանքները կատարելու համար պետք է ունենա* ***1-ին կամ 2-րդ դասի լիցենզիա, Ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարար ցանց և գազամատակարարման համակարգեր) ներդիրով:***

V. *մոնտաժային աշխատանքների համար անհրաժեշտ գործիքներ*

1. *տվյալ աշխատանքները կատարելու համար կապալառուն պետք է ունենա գազաեռակցող և փականագործ*
2. *գազաեռակցողը պետք է ունենա ոչ պակաս 5 տարվա աշխատանքային փորձ, փականագործը պետք է ունենա ոչ պակաս 3 տարվա աշխատանքային փորձ*

VI. *Առաջարկություններ*

1. *Կապալի օբյեկտի շինարարության ավարտից հետո շին մոնտաժային աշխատանքների որակի երաշխիքային ժամկետ է սահմանված 3 տարի*
2. *Պատվիրատուն շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում պետք է իրականացնի մշտական տեխնիկական հսկողություն, դրանց արդյունքները գրանցելով շինարարության մատյանում և ձևակերպելով համապատասխան ակտերով*
3. *Շին. մոնտաժային աշխատանքների սկսման պահից մինչև ավարտը պատվիրատուն, նախագծային կազմակերպության միջոցով, պետք է իրականացնի հեղինակային հսկողություն:*

*Պարբերականությունը և ժամկետները սահմանվում են պատվիրատուի և նախագծային կազմակերպության միջև կնքված պայմանագրով:*

*«Լալիկ Բոզոյան» ԱՁ* *Լ.Բոզոյան*

## *ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

*Նախագծով նախատեսվում է ցածր և միջին ճնշման գազատարի տեղադրում վերգետնյա (պողպատե խողովակ) եղանակով:*

*Նախագծով նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝*

1. *Փոսերի քանդում*
2. *Բետոնե հիմքերի տեղադրում և հասունացում*
3. *Հենասյուների տեղադրում*
4. *Խողովակի տեղադրում , ներկում*
5. *Խողովակաշարի միացում առկա գազատարին, փչամաքրում և փորձարկում*

*Շինարարության կազմակերպումը իրականացնել համաձայն հետևյալ գործող նորմատիվ փաստաթղթերին՝ ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում», ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում», ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն», ՀՀՇՆ I - 3.01.01-2003 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում», ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» և ՀՀՇՆ 42-01-2023 «ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»:*

*Աշխատանքները իրականացվում են ընդունված շինարարական մեթոդներով :*

*Հիմնական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է կատարել նախապատրաստական աշխատանքների կոմպլեքս, որը ապահովում է աշխատանքների իրականացումը ժամանակին:*

*Նախապատրաստական ժամանակահատվածի աշխատանքներն են ՝*

1. *օբյեկտի մատակարարում շինարարական տեխնիկայով , սարքավորումներով և շինանյութով:*
2. *բեռնաթափման աշխատանքների կազմակերպում :*

### *Հիմնական շինարարական մեքենաներ , մեխանիզմներ և տրանսպորտային միջոցներ*

*Շինանյութերի մատակարարումը շինհրապարակ իրականացվում է գոյություն ունեցող ավտոճանապարհներով: Ավտոտրանսպորտի և շինտեխնիկայի մոտեցումը իրականացվում է գոյություն ունեցող ավտոճանապարհներով գազատարի ուղեգծի երկայնքով: Հիմնական մեքենաների, մեխանիզմների և փոխադրման միջոցների տեսակը և քանակը որոշվում է համապատասխան շինմոնտաժային աշխատանքների ֆիզիկական ծավալներին, շինանյութերի քաշին և շինարարության կազմակերպման ընդունված մեթոդներին : Ոչ աշխատանքային ժամերին շինարարական մեքենաները և մեխանիզմները պետք է հեռացվեն շինարարական աշխատանքների տարածքից հատուկ հատկացված տարածք :*

*Աշխատանքները կատարվում են նեղվածքային պայմաններում:*

*Հաշվի առնելով նեղվածքային պայմանները, օգտագործվող մեխանիզմները փոքրագաբարիտ են:*

*Աշխատանքները պետք է կազմակերպել այնպես, որ չխափանվի ճանապարհային երթևեկությունը:*

### *Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր ցանկ՝*

| *N/N* | *Անվանում* | *Քանակ* |
|---|---|---|
| *1* | *Կողային ավտոհինքնաթափ 10տ. բեռնունակության (трубовоз)* | *1* |
| *2* | *Ավտոինքնաթափ 20տ բեռնունակության* | *1* |
| *3* | *Ավտոամբարձիչ 6տ բեռնունակության* | *1* |
| *4* | *Կոմպրեսոր* | *1* |

*Այդ ցանկը ճշտվում է շինարարության ընթացքում :*

*Շինմոնտաժային աշխատանքներից առաջացած շինարարական աղբը ժամանակավոր կուտակվում է դրա համար հատկացրած տարածքում , որտեղից բարձվում է ինքնաթափ և հեռացվում շինհրապարակից :*

*Պարտադիր պայման է ՝ աղբակույտի կարճաժամկետ կուտակում:*
*Շինարարական և կենցաղային աղբը հեռացվում է ←5 կմ հեռավորության վրա :*

### *Ջրի և էներգետիկ ռեսուրսների ապահովում*

*Շինարարության ապահովումը ջրով , էներգիայով իրականացվում է՝*

- *Էլեկտրաէներգիայով ՝շարժական էլեկտրակայանից :*
- *սեղմված օդով ՝ПК - 10 տիպի շարժական ճնշակայանքից :*
- *վառելանյութերով ՝տեղում ձեռքբերելով*
- *ջրով տնտեսական կարիքների համար ՝բերովի ջուր :*

*Կենցաղային կարիքները հոգալու համար ջրի անհրաժեշտ քանակությունը բերվում է շարժական անոթներով (передвижная емкость) : Հրդեհի մարման համար ջուրը բերովի է (ջրի հաշվարկային ծախսը համաձայն նորմերի կազմում է 15լ/վրկ):*
*Խմելու ջրի պահանջարկի հաշվարկը կատարվում է հաշվի առնելով հերթափոխում ամենաշատ աշխատողների քանակը և շինարարության տնողությունը՝ հերթափոխում 3 լիտր ջուր մեկ աշխատողի համար:*
*Կապի միջոցը շինհրապարակում որոշում է շինարարական ազմակերպությունը:*
*Էլեկտրաէներգիայի, օդի, վառելանյութի, ջրի պահանջվող քանակը (կազմակերպության մեքենաների և մեխանիզմների առկա բազային համապատասխան) կվորոշվի շինմոնտաժային աշխատանքները սկսելուց առաջ շինարարական կազմակերպության կողմից:*

### *Ժամանակավոր շենքեր և շինություններ*

*Վերանորոգման և վերատեղադրման աշխատանքները իրականացնելու համար տարածքում պետք է հատկացվի հարթակ վարչական, տնտեսական և սանիտարա-կենցաղային շենքեր և շինություններ տեղակայելու համար: Քանի որ աշխատանքները կատարվելու են համայնքի տարածքում, այդ հարցերի լուծումը տալիս է շինարարական կազմակերպությունը՝ համաձայնեցնելով տեղական կառավարման մարմինների հետ:*
*Բանվորների սպասարկման հարցերը պետք է կարգավորի շինարարական կազմակերպությունը, որը պետք է նախատեսի ժամանակավոր շենքեր և շինություններ (աշխդեկի գրասենյակ, վագոն–հանդերձարան, զուգարան և այլն):*

### *Աշխատուժի պահանջարկ*

*Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1 հերթափոխով (8 ժամ) մասնագիտացված բրիգադներով:*
*Աշխատուժի անհրաժեշտ քանակը շինարարության համար որոշվում է համապատասխան աշխատանքների ծավալների և շինարարության տնողությանը:*
*Աշխատուժի պահանջարկը (բանվորների, բրիգադների և հերթափոխի քանակը), որը մշակված է շինարարության կազմակերպման նախագծում ճշտվում է շինմոնտաժային աշխատանքները սկսելուց առաջ:*
*Ընդհանուր աշխատողների թիվը՝ R = R բ + Rիտա + Rծ + R կսպ, որտեղ*
*Rբ-ն՝ բանվորների քանակն է,*
*Rիտա –ն՝ինժեներատեխնիկական անձնակազմի թիվը,*
*Rծ-ն՝ ծառայողների թիվը,*
*R կսպ –ն՝կրտսեր սպասարկող անձնակազմի թիվը:*

*R բ = Rh + Ro, որտեղ*
*R h – հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների թիվն է,*
*R o – օժանդակ աշխատանքների վրա զբաղված աշխատողների թիվը:*
*R o-ն = 0.2 R բ, R բ = 1.2xR max, R max =7*
*R բ = 1.2xR max = 1.2x 7=9 մարդ*

*Համաձայն նորմատիվ փաստաթղթերի աշխատողների թիվը ըստ կատեգորիաների՝*

| Անվանում | Աշխատողների քանակը, մարդ |
|---|---|
| Աշխատողներ, այդ թվում: | 12 |
| - բանվորներ (83.4%) | 9 |
| - ինժեներա-տեխնիկական կազմ (9%) | 1 |
| - ծառայողական կազմ (5.9%) | 1 |
| - սպասարկող և պահակային կազմ (1.7%) | 1 |

### ***Շինարարության տևողություն***

*Շինարարության տևողությունը հաշվարկված է ելնելով աշխատանքների ծավալից և աշխատատարությունից (трудоемкость), բետոնի հասունացման շրջանից (28 օր) և կազմում է ∈ 2 ամիս:*
*Նախագծում մշակված է շինարարական աշխատանքների իրականացման օրացուցային գրաֆիկ:*

### ***Հիմնական աշխատանքներ***

*Նախապատրաստական աշխատանքները ավարտելուց հետո սկսվում են հիմնական աշխատանքները:*

### ***Հողային աշխատանքներ***

*Փոսերի քանդումը իրականացվում է ձեռքով IV և V կարգի բնահողերում:*
*Ավելացված բնահողը բեռնվում է ավտոինքնաթափ և տեղափոխվում 5կմ հեռավորության վրա:*

### ***Բետոնային աշխատանքներ***

*Նախագծով նախատեսվում է հիմքերի իրականացում մետաղական հենասյուների տակ B 12.5 դասի միաձույլ բետոնից: Բետոնային աշխատանքները պետք է համապատասխանի ՀՀՇՆ 52-01 «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» պահանջներին:*
*Բետոնի հասունացման շրջանը կազմում է 28 օր:*
*Բետոնային աշխատանքները նախատեսվում է իրականացնել տարվա չոր եղանակային պայմաններում:*

### ***Եռակցման աշխատանքներ***

*Եռակցման աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան հետևյալ նորմատիվ փաստաթղթերի պահանջներին ՍՆիՊ III-4-80:*
*Եռակցման աշխատանքների իրականացումը իր մեջ ներառում է հետևյալ պարտադիր միջոցառումների ցուցակ՝*
*- եռակցման աշխատանքների նախապատրաստման և իրականացման պատասխանատու անձանց նշանակում Կապալառուի կողմից;*
*- կրակային (огневые) աշխատանքների անցկացման կարգագիր–թույլատրության ձևակերպում;*
*- եռակցման նյութերի, սարքավորումների և գործիքների նախապատրաստում;*
*- եռակցման աշխատանքների անցկացման վայրի օդի զննում;*

*- զոդման ենթակա մասերի մակերեւույթի նախապատրաստում;*
*- անմիջականորեն եռակցման աշխատանքներ;*
*- եռակցման որակի հսկողություն:*

*Եռակցման աշխատանքները իրականացվում են ատեստավորում անցած մասնագետների ղեկավարության ներքո, համապատասխան «Էլեկտրազոդողների ատեստավորման կանոնակարգ» փաստաթղթի: Եռակցողները պետք է անցնեն ատեստավորում և ունենան վկայական:*

***Օգտագործվող եռակցման նյութերի տեսակները պետք է համապատասխան են հետևյալ նորմատիվ փաստաթղթերի պահանջներին՝ ԳՕՍՏ 9466-75* (էլեկտրոդ), ԳՕՍՏ 9087-81 (օքսիդալուծիչ), ԳՕՍՏ 2246-70 (մետաղալար), ԳՕՍՏ 10157-79* (A տեսակի արգոն), ԳՕՍՏ 8050-85* (եռակցման ածխածնի երկօքսիդ, ածխաթթվային գազ):***

*Գազային կտրումը կատարելու համար օգտագործում են՝ տեխնիկական թթվածին (ԳՕՍՏ 5583-78), ացետիլեն բալոնների մեջ (ԳՕՍՏ 5457-75), պրոպան - բութան խառնուրդ (ԳՕՍՏ 5457-75):*

*Ատեստավորում չանցած սարքավորումների օգտագործումը եռակցման և մոնտաժման աշխատանքների ժամանակ արգելվում է:*

*Խողովակների կցվանքի եռակցումը իրականացվում է էլեկտրաաղեղային (электродуговая) եռակցումով:*

*Անձրևի, ձյան, մառախուղի և քամու (քամու արագությունը >10մ/վրկ) ժամանակ եռակցման աշխատանքները թույլ է տրվում իրականացնել, եթե ապահովված է եռակցման տեղի պաշտպանությունը խոնավությունից և քամուց:*

*Առկա գազատարի կտրում և միացումը թույլատրվում է կատարել խողովակաշարը գազից ազատելուց և Պատվիրատուից թույլտվություն ստանալուց հետո: Աշխատանքներն անվտանգ իրականացնելու համար խողովակաշարում մնացած գազի ճնշումը պետք է լինի 100-500 Պա: Պետք է հաշվի առնել, որ բնակավայրերի գազամատակարարման ժամանակավոր դադարեցումը թույլատրվում է 36 ժամից ոչ ավել:*

***Մոնտաժման աշխատանքներ***

*Խողովակաշարի մոնտաժման աշխատանքների փաթեթը իր մեջ ներառում է հետևյալ աշխատանքները՝*
*- նախապատրաստական;*
*- մոնտաժման;*
*- հավաքակցման և եռակցման (сборочно-сварочные);*
*- փորձարկում;*
*- շահագործման հանձնում (пусковые):*

*Օգտագործվող խողովակները պետք է համապատասխանեն մատակարարման պահանջներին հետևյալ պարամետրերով՝*
*- խողովակների արտադրության մեթոդ;*
*- պողպատի քիմիական բաղադրություն;*
*- պողպատի ֆիզիկական և մեխանիկական հատկություններ;*
*- հսկիչ երկրաչափական չափսեր:*

*Խողովակները, նյութերը և այլն տեղափոխվում են մոնտաժման գոտի ավտոմոբիլային տրանսպորտով:*

*Վերգետնյա եղանակով գազատարը տեղադրվում է հենասյուների վրա:*

*Ճանապարհի հետ հատման հատվածում վերգետնյա գազատարը կառուցվում է H=5.0մ բարձրությամբ:*

*Մոնտաժման աշխատանքները իրականացվում են ավտոամբարձիչով և ձեռքով, օգտագործելով աստիճաններ և այլ միջոցներ:*

*Մեկուսիչ աշխատանքներ*

*Վերգետնյա գազատարը նախատեսվում է ներկել յուղաներկով 2 անգամ (արծաթամոխրագույն), նախապես պատելով գրունտով:*

### *Խողովակաշարի փչամաքրում և փորձարկում*

*Շահագործման հանձնելուց առաջ գազատարը ենթարկվում է խոռոչի մաքրման, ամրության փորձարկման և հերմետիկության ստուգման: Նախագծում ընդունված է փորձարկման պննմատիկ մեթոդը:*

*Փչամաքրման և փորձարկման աշխատանքները պետք է սկսել, երբ խողովակաշարի հատվածները ամբողջովին պատրաստ են և կատարված է նախագծային նիշում տեղադրված խողովակաշարի հետլիցքը:*

*Փչամաքրումը համարվում է ավարտված, եթե կարճախողովակից (продувочный патрубок) դուրս է գալիս չաղտոտված օդի շիթ (струя):*

*Գազատարը համարվում է փորձարկումը անցած և փորձարկման տվյալները համարվում են դրական, եթե փորձարկման ժամանակաշրջանում ճնշումը մնում է անփոփոխ, իսկ մեծ ճնշման ժամանակ գազի հոսակորուստ չի հայտնաբերվում:*

*Գազատարի փորձարկման ժամանակ հայտնաբերված թերությունները վերացվում են միայն ճնշումը նվազեցնելուց (ստանալով մթնոլորտային ճնշում) հետո:*

*Գազատարի խոռոչի մաքրման աշխատանքները իրականացվում են յուրաքանչյուր չորացված հատվածի փչամաքրումով սեղմված օդով:*

*Սեղմված օդով փչամաքրման համար պետք է օգտագործվի ցածր ճնշման կոմպրեսորային կայանքներ АМС-4:*

*Աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովը կազմում է ակտ: Փորձարկումը համարվում է ավարտված ակտի հաստատման պահից:*

### *Աշխատանքի անվտանգություն*

*Աշխատանքները իրականացնելու ժամանակ անհրաժեշտ է կատարել ՍՆիՊ III–4–80* պահանջներին:*

*Աշխատողները պետք է ապահովվեն հատուկ հագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով: Արգելվում է օտար անձանց մուտքը շինարարության տարածք: Դրա համար այդ տարածքը ցանկապատվում է: Աշխատողները պետք է անցնեն ուսուցում աշխատանքի անվտանգության վերաբերյալ: Մոնտաժման, եռակցման, բեռնման և բեռնաթափման աշխատանքներին թույլատրվում են անձինք, որոնց տարիքը 18 տարեկանից բարձր է և որոնք ունեն համապատասխան վկայական:*

*Շինարարական մեքենաները պետք է ունենան կայծմարիչներ:*

*Հրավտանգ աշխատանքների իրականացման տարածքում պետք է նախատեսվեն հրդեհի մարման համար առաջին անհրաժեշտության միջոցներ:*

*Շինարարական մեքենաները, մեխանիզմները, սարքավորումները և գործիքները պետք է համապատասխանեն աշխատանքի անվտանգության պետական ստանդարտներին և ունենան սերտիֆիկատներ, անձնագրեր:*

*Տեղափոխման աշխատանքները սկսելուց առաջ կռունկավարը պետք է՝*

*- համոզվի, որ տեղափոխման գոտու տարածքում բացակայում են կողմնակի անձինք,*

*- տա նախազգուշացնող ազդանշան:*

*Կռունկի շարժը էլեկտրահաղորդման գծերի տակ պետք է իրականացվի այն ժամանակ, երբ կռունկի սլաքը գտնվում է աշխատանքային դիրքում: Սլաքի վերևի կետից մինչև մոտակա էլեկտրահաղորդման լարն ընկած հեռավորությունը չպետք է գերազանցի 2մ:*

*Արգելվում է կռունկի տեղակայումը այն հարթակի վրա, որի թեքությունը գերազանցում է կռունկի անձնագրով նշված թեքության չափից:*

*Արգելվում է նաև կռունկի տեղակայումը լարման տակ գտնվող էլեկտրահաղորդման գծերի տակ:*

*Անձրևի և մառախուղի ժամանակ պետք է դադարեցնել կռունկի աշխատանքը: Մոնտաժման աշխատանքները կատարելու համար կռունկավարը և մոնտաժողը պետք է համոզված լինեն, որ՝*

- *մոնտաժող էլեմենտի խողովակի) քաշը չի գերազանցում ավտոամբարձիչի բեռնունակություն (грузоподъемность);*
- *խողովակը ամրացվում է (строповка) բոլոր տեղերում, որոնք նախատեսված են այդ գործողության համար և բարձրացվում են այնպես, որ բացառվի ամրացվող ճյուղերի (ветви строп) չեղ ձգումը,*
- *խողովակի բարձրացումը պետք է սկսել ղեկավարի հրամանը ստանալուց հետո;*
- *խողովակը նախապես պետք է բարձրացնել 100-200մմ բարձրության վրա, ընթատել բարձրացումը, համոզվել ճիշտ ամրացման (строповка) մեջ, ապա շարունակել բարձրացումը:*

*Աշխատանքները անհրաժեշտ է կատարել ցերեկային ժամերին: Երեկոյան ժամերին աշխատանքները շարունակելու ժամանակ պետք է ապահովվի բանվորների աշխատատեղերի պահանջվող լուսավորությունը համաձայն ԳՕUS 12.0.046-85:*

## *Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ*

*Նախագծային լուծումների համապատասխանության համար պատասխանատվությունը կրում է այն շինարարական կազմակերպությունը, որը իրականացնում է այդ աշխատանքները: Աշխատանքների համար տրամադրված (ժամանակավոր օգտագործման համար) հողատարածքները շինարարության ավարտից հետո պետք է պարտադիր վերականգնվեն: Բոլոր անհրաժեշտ միջոցառումները կապված արտաքին միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համապատասխան կոմպետենտ մարմինների կողմից:*

*Այդ միջոցառումները հետևյալն են՝ ժամանակավոր օգտագործվող հանրային եւ մասնավոր հողատարածքների վերականգնում; Նախազգուշացնող միջոցները, որոնք կապված են աղտոտման կանխարգելումը, ծառերի և բույսերի պաշտպանություն, չօգտագործվող և օգտագործվող նյութերի ճիշտ բաշխում, շինհրապարակների անհրաժեշտ մաքրում և սարքավորում, սանիտարական միջոցառումներ, վնասակար ազդեցությունների նվազեցում:*

*Շինարարական աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է իրականացնել տարածքի վերականգնման եւ բարեկարգման աշխատանքներ: Կապալառուն պետք է կազմակերպի աշխատանքներն այնպես, որ կանխվի ախտոտումը շինարարական աղբից, նավթամթերքից, քիմիական նյութերից:*

*Կապալառուն պարտավոր է ապահովել թափոնների և շինարարական աղբի հեռացում: Կապալառուն պարտավոր է նախատեսել շինարարական փոշուց օդի աղտոտման նվազեցման միջոցառումներ:*

*«Լալիկ Բոզոյան» ԱՁ* *Լ.Բոզոյան*

# ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում







## Պայմանական նշաններ

- Նախագծվող մ/ճ վ/գ գազատար
- Առկա ց/ճ վ/գ գազատար
- Մ/ճ վ/գ գազատար
- Վերատեղադրվող մ/ճ վ/գ գազատար

| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. | |
|---|---|---|---|
| | | | |
| Ստուգող | Լ.Բոզոյան | | |
| | | | |
| | | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Օբյեկտ N Լ12-25 | | | |
| Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում | | | |
| Գազամատակարարում | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | ԱՆ | 1 | 10 |
| ց/ճ գազատար | «Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս | | |

## ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
### ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացման







1. Գազատարի մոնտաժումն և փորձարկումն իրականացնել համաձայն ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»:
2. Նախագծվող վերգետնյա մ/ճ և ց/ճ գազատարը նախատեսված է՝Ø133x4, Ø108x4,0, Ø57x3.5 ԳՕՍՏ 10704-2001 խողովակից որը տեղադրվում է H=1÷4.0մ բարձրության վրա, ավտոմոբիլային ճանապարհները հատելիս գազատարի բարձրությունը կազմում է H=5.0մ:
3. Ճանապարհաեզրում հողային աշխատանքները իրականացնելիս տեղադրել
անվտանգ երթևեկության համար նախատեսված ազդանշանային նշանները:
4. Անհատական բնակելի տների դարպասների մոտ բարձրացում-իջեցումները
ճշտել բնակիչների հետ:
5. Միացումը իրականացնել գազային տնտեսության շահագործման ծառայության աշխատակիցների ներկայությամբ:

Նախագծվող մ/ճ վ/գ գազատար
Առկա ց/ճ վ/գ գազատար
Մ/ճ վ/գ գազատար
Վերատեղադրվող մ/ճ վ/գ գազատար
✖ Անշարժ հենարան
▷ Տրամագծի անցում

| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. | Օբյեկտ N L12-25 | | |
|---|---|---|---|---|---|
| Ստուգող | Լ.Բոզոյան | | Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | | Գազամատակարարում | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | ԱՆ | 2 | 10 |
| | | | ց/ճ գազատար | «Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս | | |

# ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում

## Հանգույց 1




## Հանգույց 2, 3, 4 և 5




## Հանգույց 6







| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. | Օբյեկտ N Լ12-25 | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ստուգող | Լ.Բոզոյան | | Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում | | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | | Գազամատակարարում | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | ԱՆ | 3 | 10 |
| | | | գ/ճ գազատար | «Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս | | |

*ՏԱՐԱԾԱԿԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐ*

*ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացման*



| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. | Օբյեկտ N Լ12-25 | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| Ստուգող | Լ.Բոզոյան | | Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում | | |
| | | | | | |
| | | | | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | | Գազամատակարարում | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | ԱՆ | 4 | 10 |
| | | | ց/ճ գազատար | «Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս | |
| | | | | | |
| | | | | | |

## ՏԱՐԱԾԱԿԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐ
### ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի մ/ճ գազատարի վերատեղադրում




| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. |
|---|---|---|
| | | |
| Ստուգող | Լ.Բոզոյան | |
| | | |
| | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

**Օբյեկտ N Լ12-25**

Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում

| Գազամատակարարում | Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|---|
| | ԱՆ | 5 | 10 |

Մ/ճ գազատար

«Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ
Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս

# ՏԱՐԱԾԱԿԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐ

## ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացման




| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փաստացի հողի նիշը, մ | | 1171.00 | 1171.00 | | 1171.00 | 1171.00 |
| Գազատարի ներքևի նիշը, մ | 1176.00 | 1175.00 | 1175.00 | 1173.00 | 1175.00 | 1175.00 |
| Հենասյան բարձրությունը, մ | | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Գազատարի տեսակը և մեկուսացման տիպը | Ø57x3.5 ԳՕՍT 10704-2001 Յուղաներկում երկու անգամ | | | | | |
| Թեքություն ‰ / Հեռավորություն, մ | 0,001 | 162 | | | | |
| Հեռավորություն, մ | 1 | 85 | 1 | 75 | | |
| Ցանշում | 0կե | կ+1 | կ+86 | կ+87 | 1կե | կ+62 |
| Գազատարի հատակագիծ | իջեց. | բարձր իջեց | խցափակիչ Ø57 | | | |




| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փաստացի հողի նիշը, մ | | 1171.00 | 1171.00 | | 1171.00 | 1171.00 |
| Գազատարի ներքևի նիշը, մ | 1176.00 | 1175.00 | 1175.00 | 1173.00 | 1175.00 | 1175.00 |
| Հենասյան բարձրությունը, մ | | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Գազատարի տեսակը և մեկուսացման տիպը | Ø57x3.5 ԳՕՍT 10704-2001 Յուղաներկում երկու անգամ | | | | | |
| Թեքություն ‰ / Հեռավորություն, մ | 0,001 | 162 | | | | |
| Հեռավորություն, մ | 1 | 85 | 1 | 75 | | |
| Ցանշում | 0կե | կ+1 | կ+86 | կ+87 | 1կե | կ+62 |
| Գազատարի հատակագիծ | իջեց. | բարձր իջեց | խցափակիչ Ø57 | | | |

## Պայմանական նշաններ

- Նախագծվող ց/ճ վ/գ գազատար
- Անշարժ հենարան
- Տրամագծի անցում

| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. | Օբյեկտ N L12-25 | | |
|---|---|---|---|---|---|
| Ստուգող | Լ.Բոզոյան | | Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | | Գազամատակարարում | Փուլ: ԱՆ | Թերթ: 6 / Թերթեր: 10 |
| | | | ց/ճ գազատար | «Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս | |

# ՏԱՐԱԾԱԿԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐ
## ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացման




| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Փաստացի հողի նիշը, մ | 1171.00 | 1171.00 | | 1171.00 | 1171.00 |
| Գազատարի ներքևի նիշը, մ | 1176.00 / 1175.00 | 1175.00 | 1173.00 | 1175.00 | 1175.00 |
| Հենասյան բարձրությունը, մ | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Գազատարի տեսակը և մեկուսացման տիպը | Ø57x3.5 ԳՕՍՏ 10704-2001 Յուղաներկում երկու անգամ | | | | |
| Թեքություն ‰ / Հեռավորություն, մ | 0,001 / 162 | | | | |
| Հեռավորություն, մ | 1 | 85 | 1 | 75 | |
| Ցանշում | | | | | |
| Գազատարի հատակագիծ | | | | | |







| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Փաստացի հողի նիշը, մ | 1171.00 | 1171.00 | | 1171.00 | 1171.00 |
| Գազատարի ներքևի նիշը, մ | 1176.00 / 1175.00 | 1175.00 | 1173.00 | 1175.00 | 1175.00 |
| Հենասյան բարձրությունը, մ | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Գազատարի տեսակը և մեկուսացման տիպը | Ø57x3.5 ԳՕՍՏ 10704-2001 Յուղաներկում երկու անգամ | | | | |
| Թեքություն ‰ / Հեռավորություն, մ | 0,001 / 162 | | | | |
| Հեռավորություն, մ | 1 | 85 | 1 | 75 | |




## Պայմանական նշաններ

- Նախագծվող ց/ճ վ/գ գազատար
- Անշարժ հենարան
- Տրամագծի անցում

| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. | Օբյեկտ N Լ12-25 | | |
|---|---|---|---|---|---|
| Ստուգող | Լ.Բոզոյան | | Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | | Գազամատակարարում | Փուլ: ԱՆ | Թերթ: 7 / Թերթեր: 10 |
| | | | ց/ճ գազատար | «Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս | |













| Խողովակի տրամագիծը | Բետոն մ3 | Ամրան մ/կգ | Պողպատյա թիթեղ մ2/կգ | Կիսախողովակի հատ/կգ | Պտուտակ կգ | Գրունտ մ$^3$ | Անշարժ հենարանի քաշը ըստ բարձրության կգ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | h=0,5մ | h=1,0մ | h=1,5մ | h=2,0մ | h=2,5մ |
| | | | | | | | Շվելլեր մ/կգ | | | | |
| | | | | | | | 3,9 / 41 | 4,9 / 51 | 5,9 / 61,4 | 6,9 / 71,8 | 7,9 / 82,2 |
| dպ50 | | | | 4 / 1,6 | 0,164 | | 57,4 | 67,4 | 77,8 | 88,2 | 98,6 |
| dպ70 | | | | 4 / 2,2 | 0,212 | | 58,0 | 68,0 | 78,4 | 88,8 | 99,2 |
| dպ80 | | | | 4 / 4,2 | 0,212 | | 60,0 | 70,0 | 80,4 | 90,8 | 101,2 |
| dպ100 | 0,82 | Ø 12 A III 12,4 / 11,1<br>Ø 6 A I 13,0 / 3,0 | 0,15 / 0,7 | 4 / 5,2 | 0,8 | 1,15 | 61,0 | 71,0 | 81,4 | 91,8 | 102,2 |
| dպ125 | | | | 4 / 6,4 | 0,84 | | 62,2 | 72,2 | 82,6 | 93,0 | 103,4 |
| dպ150 | | | | 4 / 6,9 | 0,96 | | 62,7 | 72,7 | 83,1 | 93,5 | 103,9 |
| dպ200 | | | | 4 / 15,8 | 1,4 | | 71,6 | 81,6 | 92,0 | 102,4 | 112,8 |

| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. | Օբյեկտ N L12-25 | | |
|---|---|---|---|---|---|
| Ստուգող | Լ.Բոզոյան | | Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | | Գազամատակարարում | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | ԱՆ | 8 | 10 |
| | | | Անշարժ հենարան | «Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս | |

Կտրվածք 1-1




Պաշտպանիչ ցանց հատակագիծ




Հողանցման կոնտուրի հատակագիծ




Միացման հանգույցի գծապատկեր




| ՀՀ | Նշում | Անվանումը | Չափ. միավ. | Քանակը | Միավորի քանակը մաս.կգ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ԳՕՍՏ 103-76 | Շերտավորպողպատ 4x80 | մ | 0.4 | 2.51 |
| 2 | ԳՕՍՏ 8509-83 | Անկյունավոր պողպատ 50x50x5 | մ | 1.5 | 3.77 |
| 3 | ԳՕՍՏ 2590-88 | Կլոր պողպատ B8 | մ | 7.0 | 0.4 |
| 4 | ՏՈՒ 34-12-11214-87 | Մեկուսիչ ШПК-10 | հատ | 8 | 0.25 |
| 5 | ԳՕՍՏ 18381-80 | Ձող ШУ-20 | հատ | 8 | 0.22 |
| 6 | ԳՕՍՏ 1660-73 | Մետաղալար Ø2 | մ | 1.5 | 0.04 |
| 7 | ԳՕՍՏ 103-93 | Շերտավոր պողպատ 4x40 | մ | 7.5 | 1.26 |
| 8 | ԳՕՍՏ 8509-93 | Անկյունավոր պողպատ 63x63x5 | մ | 4.5 | 4.81 |
| 9 | | Հողային աշխատանք | մ³ | 2.5 | |

1. Համաձայն ПУЭ -ի, 0.4կՎ օդային գծերի հետ հատման տեղում գազատարի պաշտպանիչ ցանցի երկարությունը ընդունել 4.0մ:
2. Մետաղական կոնստրուկցիաների էլեկտրաաղեղային եռակցումը կատարել ըստ ԳՕՍՏ 5264-80-ի. Գազատարի խողովակի վրա եռակցումը իրականացնել կետային եղանակով:
3. Մոնտաժային աշխատանքները ըստ ПУЭ և СНиП:
4. Հողանցման սարքավորումների տեղադրելուց հետո կատարել ստուգիչ չափում: Օդային գծի հատման կետում հողանցման դիմադրությունը պետք է լինի 10 Օհմ-ից ոչ ավել: Ավել դիմադրությունների դեպքում ավելացնել ուղղահայաց էլեկտրոդներ:
5. *Չափերը ճշտել տեղում:

| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. | Օբյեկտ N L12-25 | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| Ստուգող | Լ.Բոզոյան | | Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում | | |
| | | | | | |
| | | | | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | | Գազամատակարարում | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | ԱՆ | 9 | 10 |
| | | | Պաշտպանիչ ցանց | «Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս | |
| | | | | | |
| | | | | | |




Ամրանի երկարությունը - 3x300մմ
Ամրանի քաշը 3x 0.267 - 0.8կգ

| H | d | 150 | 125 | 100 | 80 | 70 | 50 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5,0 | a | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | b | 1100 | 1100 | 1100 | 1100 | 1100 | 1100 |
| 4,5 | a | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | b | 1100 | 1100 | 1100 | 1100 | 1100 | 1100 |
| 4,0 | a | 900 | 900 | 900 | 900 | 900 | 900 |
| | b | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 3,5 | a | 700 | 700 | 700 | 700 | 700 | 700 |
| | b | 800 | 800 | 800 | 800 | 800 | 800 |
| 3,0 | a | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |
| | b | 700 | 700 | 700 | 700 | 700 | 700 |
| 2,5 | a | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |
| | b | 700 | 700 | 700 | 700 | 700 | 700 |
| 2,0 | a | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 |
| | b | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |
| 1,5 | a | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 |
| | b | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |
| 1,2 | a | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 |
| | b | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |
| 1,0 | a | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 |
| | b | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |
| 0,5 | a | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 |
| | b | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |

Շարժական հենասյան բետոնի հիմքի չափսերը և ծավալները

| Հենասյան բարձրությունը (վերգետնյա մաս) H | Հենասյան բետոնե հիմքի չափսերը մ | Բետոնի ծավալը $մ^3$ |
|---|---|---|
| 5,0 | 0,6 x 0,6 x 1,1 (b) | 0,40 |
| 4,5 | 0,5 x 0,5 x 1,0 (b) | 0,25 |
| 4,0 | 0,5 x 0,5 x 0,9 (b) | 0,23 |
| 3,5 | 0,5 x 0,5 x 0,7 (b) | 0,18 |
| 3,0 | 0,5 x 0,5 x 0,7 (b) | 0,18 |
| 2,5 | 0,5 x 0,5 x 0,6 (b) | 0,15 |
| 2,2 | 0,5 x 0,5 x 0,6 (b) | 0,15 |
| 2,0 | 0,5 x 0,5 x 0,6 (b) | 0,15 |
| 1,5 | 0,5 x 0,5 x 0,6 (b) | 0,15 |
| 1,2 | 0,5 x 0,5 x 0,6 (b) | 0,15 |
| 1,0 | 0,5 x 0,5 x 0,6 (b) | 0,15 |
| 0,5 | 0,5 x 0,5 x 0,6 (b) | 0,15 |

| Պաշտոն | Ա.Ա.Հ. | ստորագ. | Օբյեկտ N L12-25 | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ստուգող | Լ.Բոզոյան | | Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացում | | | |
| Նախագծող | Ա.Սարգսյան | | Գազամատակարարում | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | ԱՆ | 10 | 10 |
| | | | Շարժական հենասյուն | «Լալիկ Բոզոյան Գառնիկի» ԱՁ Լիցենզիա ՔՊԼ-002798 2-րդ դաս | | |

**<u>ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՄՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ</u>**
**<u>ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ</u>**

| ՇԻՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ամիսներ | |
|---|---|---|
| | 1 | 2 |
| ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | |
| ՓՈՍԵՐԻ ՔԱՆԴՈՒՄ | | |
| ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ | | |
| ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ | | |
| ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ B12,5 ԴԱՍԻ ԲԵՏՈՆԻՑ | | |
| ԳԱԶԱՏԱՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ | | |
| ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԱԶԱՏԱՐԻ ՆԵՐԿՈՒՄ | | |
| ԳԱԶԱՏԱՐԻ ՓԱՐՁԱՐԿՈՒՄ | | |
| ԳԱԶԱՏԱՐԻ ՆԵՐՄԻԱՑՈՒՄ | | |

## Աշխատանքների և նյութերի ծավալ

ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի գազիֆիկացման

| Աշխատանքի անվանումը | Չափի միավոր | Ծավալ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| **Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի մ/ճ գազատարի կառուցում** | | |
| **Հողային աշխատանք, հենարանների համար** | | |
| Փոսերի քանդում IV-րդ կարգի գրունտում, ձեռքով | մ3 | 3,300 |
| Փոսերի քանդում V-րդ կարգի գրունտում, ձեռքով | մ3 | 12,440 |
| Ավելորդ հողի հարթեցում տեղում | մ3 | 15,740 |
| Բետոնե հիմքերի կառուցում B-12,5 (69 տեղ) | մ3 | 15,740 |
| **Հենարաններ** | | |
| Մետաղական հենարանների տեղադրում | տն | 1,143 |
| Պողպատյա խողովակի արժեք Φ108*3,5մմ | մ | 126,700 |
| Մետաղական շինվածքներ հենարանների համար | տն | 0,117 |
| Ամրան Մ 12 A III | տն | 0,055 |
| **Անշարժ հենարաններ** | | |
| Մետաղական անշարժ հենարանների տեղադրում Φ108մմ խողովակի տակ 4 հատ h=1 | տն | 0,280 |
| **Գազատար** | | |
| Պողպատե խողովակի d=108*4մմ տեղադրում փորձարկումով | մ | 451,000 |
| **Ձևավոր մասեր** | | 0,000 |
| Պողպատե ձևավոր մասերի տեղադրում | տն | 0,076 |
| Պողպատե Φ 108x5մմ 130o արմունկի արժեքը | հատ | 21,000 |
| Գազատարի փչամաքրում | մ | 451,000 |
| Հենասյուների և գազատարի մակերևույթների նախաներկում ГФ -021 2 շերտով | մ2 | 200,400 |
| Խողովակների և հենարանների ներկում հակակոռոզիոն ներկով /2 անգամ/ | 100մ2 | 2,004 |
| Ներմիացում գոյություն ունեցող գազատարին d=108 | հատ | 1,000 |
| Ռետինե տակդիր | կգ | 6,650 |
| **Եղեգնաձոր քաղաքի <Խնձորի այգի> թաղամասի ց/ճ գազատարի կառուցում** | | |
| **Հողային աշխատանք, հենարանների համար** | | |
| Փոսերի քանդում IV-րդ կարգի գրունտում, ձեռքով | մ3 | 15,400 |
| Փոսերի քանդում V-րդ կարգի գրունտում, ձեռքով | մ3 | 57,900 |
| Ավելորդ հողի հարթեցում տեղում | մ3 | 73,300 |
| Բետոնե հիմքերի կառուցում B-12,5 (270 տեղ) | մ3 | 73,300 |
| **Հենարաններ** | | 0,000 |
| Մետաղական հենարանների տեղադրում | տն | 8,812 |
| Պողպատյա խողովակի արժեք Φ108*3,5մմ | մ | 583,200 |
| Պողպատյա խողովակի արժեք Φ76*3,0մմ | մ | 657,600 |
| Մետաղական շինվածքներ հենարանների համար | տն | 0,410 |
| Ամրան Մ 12 A III | տն | 0,216 |
| **Անշարժ հենարաններ** | | |
| Մետաղական անշարժ հենարանների տեղադրում Φ108մմ խողովակի տակ 6 հատ h=2 | տն | 0,551 |
| Մետաղական անշարժ հենարանների տեղադրում Φ57մմ խողովակի տակ 6 հատ h=2 | տն | 0,441 |
| **Գազատար** | | |
| Պողպատե խողովակի d=133*4մմ տեղադրում փորձարկումով | մ | 75,000 |
| Պողպատե խողովակի d=108*4մմ տեղադրում փորձարկումով | մ | 935,000 |
| Պողպատե խողովակի d=57*3,5մմ տեղադրում փորձարկումով | մ | 849,000 |
| **Ձևավոր մասեր** | | |
| Պողպատե ձևավոր մասերի տեղադրում | տն | 0,331 |
| Պողպատե Φ 133x5մմ 90o արմունկի արժեքը | հատ | 12,000 |
| Պողպատե Φ 108x5մմ 130o արմունկի արժեքը | հատ | 1,000 |
| Պողպատե Φ 108x5մմ 90o արմունկի արժեքը | հատ | 54,000 |
| Պողպատե Φ 108x5մմ 45o արմունկի արժեքը | հատ | 5,000 |
| Պողպատե Φ 57x5մմ արմունկի արժեքը | հատ | 28,000 |
| Տրամագծի անցում Φ 133/108 արժեքը | հատ | 12,000 |
| Տրամագծի անցում Φ 108/57 արժեքը | հատ | 1,000 |
| Խցափակիչ Φ 57 արժեքը | հատ | 5,000 |
| Գազատարի փչամաքրում | մ | 1859,000 |
| Հենասյուների և գազատարի մակերևույթների նախաներկում ГФ -021 2 շերտով | մ2 | 857,200 |
| Խողովակների և հենարանների ներկում հակակոռոզիոն ներկով /2 անգամ/ | 100մ2 | 8,572 |
| Կցաշուրթերի մոնտաժում dպ-108մմ | հատ | 2,000 |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| Սողնակավոր փականի տեղադրում d=108մմ | հատ | 1,000 |
| Ներմիացում գոյություն ունեցող գազատարին  d=108 | հատ | 1,000 |
| Ռետինե տակդիր | կգ | 19,120 |
| **Մետաղական պաշտպանիչ ցանց h=5, 7 կոմպլեկտ** | | |
| Փոսերի քանդում IV կարգի գրունտում ձեռքով | մ3 | 17,500 |
| Ավելորդ գրունտի բարձում ինքնաթափ ձեռքով, տեղափոխում 5 կմ | տն | 31,500 |
| Մետաղական պաշտպանիչ ցանցի կառուցում | տն | 0,079 |
| Մեկուսիչների տեղադրում ШПК-10 | հատ | 56,000 |
| Ուղահայաց հողանցում (էլեկտրոդը անկյունավոր պողպատից 63x63x5մմ) | հատ | 42,000 |
| Հորիզոնական հողանցում (40x4մմ շերտապողպատից) | մ | 105,000 |

### Մետաղական հենարաններ, <Խնձորի այգի> թաղամասի մ/ճ գազատար

| | | |
|---|---|---|
| Մետաղական հենարան 108մմ H=5   (6,0) | հատ | 2 |
| Մետաղական հենարան 108մմ H=4   (4,8) | հատ | 4 |
| Մետաղական հենարան 108մմ H=2   (2,5) | հատ | 1 |
| Մետաղական հենարան 108մմ H=1   (1,5) | հատ | 62 |